ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ի հիշատակ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի՝ Վիրահայոց թեմի Ջավախքի և Բաթումի հայոց եկեղեցիներում ղողանջեցին զանգերն ու կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Այդ օրը մարդաշատ էր նաև Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին, ուր հոգեհանգստյան արարողությունն անցավ հանդիսապետությամբ թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և մասնակցությամբ քահանայից դասի: Հավարտ արարողության Սրբազան Հայրն իր խոսքն ուղղեց հավաքվածներին՝ իր օրհնությունը բերելով բարեգութ այն ժողովուրդներին, ովքեր դառնադաժան այդ օրերին սատար կանգնեցին հայ ժողովրդին ու օգնեցին, որպեսզի տառապյալ Հայոց աշխարհն անսասան մնար: Առաջնորդն իր երախտագիտությունը հայտնեց հատկապես աղետյալ գոտուն առաջին օգնությունը ցուցաբերած եղբայր վրաց ժողովրդին: Խոսելով վերածնվող աղետի գոտուց, Սրբազան Հայրն ուրախությամբ շեշտեց, որ նրանում ընթացող դրական տեղաշարժերը առհավատչյան են օրեցօր բարգավաճող Հայաստանի, որին «...բարեխոս են ասես Երկնային արքայության մեջ թևածող անմեղ զոհերի հրեշտակացած հոգիները»:

Ի թիվս խուռներամ հավատավոր ժողովրդի, Վիրահայոց սուրբ տաճարում իրենց ներկայությամբ ու աղոթքով զոհերի խնկաբույր հիշատակը ոգեկոչեցին Վրաստանում ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի Հայերի Միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի հայ խորհրդարանականները: Այստեղ էր նաև 1980-ականների վերջերին Վրաստանի կենտկոմի առաջին քարտուղար Ջումբեր Պատիաշվիլին, ով 1988-ի չարագույժ օրերին անձամբ էր օգնում աղետյալ գոտուն: Այդ օրերից սկսած յուրաքանչյուր տարի, դեկտեմբերի 7-ին, վրաց ժողովրդի այս մեծ հայասերը հայոց տաճար է այցելում և իր խոնարհումը բերում հազարավոր զոհերի անմար հիշատակի առջև:

Եկեղեցական արարողությանը հաջորդեց Թբիլիսիի Արամ Խաչատրյանի անվան թիվ 10 երաժշտական դպրոցի համերգասրահում երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշ-երեկոն, որը կազմակերպվել էր Վիրահայոց թեմի Առաջնորդարանին առընթեր Մշակույթի հանձնախմբի, Վրաստանում ՀՀ դեսպանատան և Վրաստանի Հայերի Միության համատեղ նախաձեռնությամբ: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նահատակների հիշատակը, որից հետո արտասանեցին Տերունական աղոթքը: Այնուհետև խոսք ասացին ՀՀ դեսպան պարոն Սիլվանյանը, ՎՀՄ նախագահ պարոն Մուրադյանը, ՎՀԳ «Վերնատան» նախագահ Գևորգ Մնխչյանը: Հուշ-երեկոյի ընթացքում տարբեր կատարումներով հանդես եկավ Սուրբ Գևորգ եկեղեցու երգչախումբը, դաշնակահար Եսայի Աբովյանը, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան դրամատիկական թատրոնի դերասաններ, հայ և վրաց արվեստի գործիչներ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ